«Հաստատում եմ» ԵՄՀ ռեկտոր,

Ս. Օհանյան _____________

“_____”_______ 2020թ.

# Հրավեր մասնակցելու սարքավորումների ձեռքբերման բաց գնառաջարկի առաջին փուլին Հայաստանի բուհերի համար

Պայմանագիր առաջարկող հաստատությունը՝ Եվրասիա միջազգային համալսարանը (այսուհետ՝ Կապալառու) սույնով հրավիրում է մասնակցելու երկու փուլով անցկացվելիք սարքավորումների ձեռքբերման բաց գնառաջարկին՝ նախագծի 9 գործընկեր Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների համար Էրազմուս+ CBHE (#609850-AM-2019-EPPKA2-CBHE-SP) «Դոկտորական կրթության բարեփոխումը Հայաստանում՝ ակադեմիական համայնքի, արդյունաբերության պահանջներին և ԵՄ փորձին համապատասխան» (ARMDOCT) նախագծի շրջանակում:

1. Բաց գնառաջարկի առաջին փուլում հանձնաժողովի կողմից կընտրվեն հրավերի պահանջները բավարարող մատակարարները:
2. Բաց գնառաջարկի երկրորդ փուլում ընտրված մատակարարներին կտրամադրվի 14 օր՝ ներկայացնելու վերջնական գին՝ ըստ գնորդի կողմից նշված սարքավորումների ընդհանուր քանակի: Երկրորդ փուլի հայտարարությունը կուղարկվի բացառապես առաջին փուլի արդյունքներով ընտրված կազմակերպություններին:
3. Երկրորդ փուլում հրավերի պահանջները բավարարող և տեխնիկական պարամետրերը բավարարող ու նվազագույն գին առաջարկած մատակարարին նախատեսված կարգով առաջարկվելու է կնքել սարքավորումների գնման պայմանագիր Էրազմուս+ (ARMDOCT) նախագծի շրջանակում ընդգրկված բուհերի համար:
4. Գնումների մասին ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ անկախ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից ցանկացած անձ ունի հավասար իրավունքներ մասնակցելու սույն գնաառաջարկին:
5. Ի հավելումն հայերենի, հայտերը կարող են նաև ներկայացվել անգլերեն և ռուսերեն լեզուներով:
6. Սույն հայտարարության մասին հավելյալ տեղեկատվություն ստանալու համար կարող եք ուղարկել Ձեր գրավոր հարցադրումները նշված էլ. հասցեին (armdoct.erasmus@eiu.am) կամ կապ հաստատել նախագծի համակարգողների հետ:


**Արնիկ Օհանյան**
Եվրասիա միջազգային համալսարան
(ARMDOCT նախագծի համակարգող)
Tel.: (+37410) 24 94 38

**Արայիկ Նավոյան**
Հայաստանում ֆրանսիական համալսարան
(ARMDOCT նախագծի համա-համակարգող)
Tel.: +374 55 10 06 66

7. Գնառաջարկը պետք է ներկայացվի ստորև ներկայացված ցուցումների համաձայն: Ձեր ընկերության կողմից լրացվող և ներկայացվող կից Ծառայությունների պայմանները (Հավելված 2) հետագայում կկազմեն պայմանագրի անքակտելի մասը (ընտրվելու դեպքում):

**7.1. Գնառաջարկների ընդունումը**

7.1.1. Գնառաջարկները (Հավելված 2) պետք է ներկայացվեն հայերեն, անգլերեն կամ ռուսերեն լեզուներով և ապրանքերի գները պետք է ներկայացվեն ՀՀ դրամով (ՀՀ ռեզիդենտ կազմակերպության դեպքում) և Եվրոյով (ոչ ռեզիդենտ կազմակերպության դեպքում): Գինը պետք է ներառի տեխնիկական միջոցների փոխադրումը համագործակից բոլոր բուհեր (ընդհանուր թվով 9 ՀՀ բուհ): Բարձրագույն ուսումնական հաստատությունների ցանկը ներկայացված է հետևյալ հղումով՝ www.armdoct.com/consortium:

7.1.2. **Գնառաջարկների ներկայացման վերջնաժամկետն է՝ 10.07.2020, 11:00 (Երևանի ժամանակով):**

7.1.3. Խնդրում ենք գնառաջարկները ներկայացնել փակ կնքված ծրարով Եվրասիա միջազգային համալսարանի հասցեին հետևյալ մակագրությամբ.

Եվրասիա միջազգային համալսարան
Ազատության 24/2, ՀՀ, 0014

**Սարքավորումների ձեռքբերման գնառաջարկ**
**Էրազմուս+ CBHE (#609850-AM-2019-EPPKA2-CBHE-SP)**
**Առաջին փուլ**

**«ԴՈԿՏՈՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ և ԵՄ ՓՈՐՁԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ» (ARMDOCT) նախագծի շրջանակում**

**Չբացել մինչև 10.07.2020, 11:00 (Երևանի ժամանակով):**

________________________________________

(Հայտատուի ամբողջական անվանումը, որը ներկայացրել է գնառաջարկը)

________________________________________

(Հայտատուի հասցեն և էլ. փոստը)

**7.2. Հատուկ պայմաններ**

7.2.1. Համաձայն ԵՄ և Հայաստանի միջև կնքված համաձայնագրերի՝ Էրազմուս+ ծրագրերի շրջանակներում սարքավորումների գնումը ազատված է հարկերից (այդ թվում ԱԱՀ),

տուրքերից և վճարումներից: Եվրասիա միջազգային համալսարանի կողմից կներկայացվի ԱԱՀ-ից ազատման համար համապատասխան նամակ՝ ներկայացնելու ՀՀ հարկային մարմիններին:

7.2.2. Հարկերից, այդ թվում ԱԱՀ, ազատման իրավունք ստանալու համար գնված սարքավորումները պետք է ներկրվեն և տեղափոխվեն Նախագծի կոնսորցիումի գործընկերներին (www.armdoct.com/consortium), ինչպես նշված է գնառաջարկի կից հայտարարության մեջ:

7.2.3. Առաջարկվող սարքավորումները պետք է արտադրված լինեն Հայաստանի շուկայի համար և տրամադրվող երաշխիքները պետք է ապահովագրված լինեն Հայաստանում համապատասխան ապրանքանիշերի պաշտոնական սպասարկման կենտրոնների կողմից:

7.2.4. Գնառաջարկը պետք է ներառի նաև նվազագույնը 2 տարվա երաշխիքային սպասարկման, ինչպես նաև սարքավորումները 9 բուհում (որից 8-ը Երևանում, մեկը Վանաձորում) տեղադրելու ծախսերը:

### 7.3. Առաջին փուլի անցկացման պայմաններ

7.3.1. Գնառաջարկը գնահատվում է բոլոր տեսակի սարքավորումների համար առաջարկվող լավագույն գին և որակ հարաբերակցության հիման վրա: Առաջին փուլում գինը ներկայացվում է մեկ միավորի համար:

7.3.2. Առաջարկվող գներից բացի հաշվի են առնվելու Հայաստանում կամ արտերկրում մատակարարի աշխատանքային կենսագրությունը և առաջարկվող սարքավորումների պարամետրերն ու երաշխիքային պայմանները:

7.3.3. Պայմանագիրը տրամադրվում է այն հայտատուին, ով կներկայացնի բոլոր տեսակի սարքավորումների համար առաջարկվող ամենամատչելի գնառաջարկը նույն տեխնիկական պարամետրերն ունեցող սարքավորումների և տրամադրվող ծառայությունների համար:

7.3.4. Առաջին փուլն անցած հայտատուների հետ լրացուցիչ կապ կհաստատվի էլ. փոստով գնառաջարկի հրավերում նշված վերջնաժամկետից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում, կտրամադրվի տեղեկատվություն անհրաժեշտ սարքավորումների քանակի մասին, ինչպես նաև երկրորդ փուլի հայտարարությունը:

Հավելված 1

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱՄԵՏՐԵՐ

| N | Սարքավորման անվանումը | Նկարագրություն և տեխնիկական պարամետրեր |
|---|---|---|
| 1 | Նոութբուք (Laptop) | **Screen:** >= 15.6" FHD (1920 x 1080) resolution<br>**CPU:** >= Intel Core I7 8 Gen,<br>The proposed laptop must have overall score of at least 1183 under the SYSmark 2018. The benchmark test results certified by the benchmarking institutions should be submitted with the bid. CPU should be 64 bit (emulated 64 bit processors would be acceptable) and worked at designated CPU frequency by the CPU vendor. CPU should support DDR 4 2400MHz memory type.<br>**RAM:** >= 8 GB,<br>**SSD**: >= 256GB,<br>Webcam: Included<br>HD video |
| 2 | **Գրասենյակային համակարգիչ (Desktop PC)** | **CPU: >=** Intel Core I7 8 Gen.<br>The proposed PC must have overall score of at least 1490 (one thousand four hundred ninety) under the SYSmark 2018. The benchmark test results certified by the benchmarking institutions should be submitted with the bid. The # of CPU cores should be 6 (excluding Threads) or above. CPU should be 64 bit and worked at designated CPU frequency by the CPU vendor. CPU should support DDR 4 2666MHz memory type.<br>**RAM:** >= 8 GB (2x4GB dimm), or 16 GB (2x8GB dimm)<br>**SSD: >=** 256GB,<br>**HDD:** >= 512GB,<br>**Dedicated Video Card:** >= 4GB,<br>**LCD monitor: >=** 22" FHD (1920x1080) resolution at 60Hz refresh rate and 5ms response time or above, HDMI video input Interface and built-in 5W dual speakers or above, Contrast Ratio 1000:1, 1 USB 3.0 port – Upstream,<br>**Keyboard:** QWERT – based layout, membrane, wired keyboard with USB interface<br>**Mouse:** Three button (including scroll wheel) wired mouse with USB interface, optical sensor sensitivity should be at least 1000 DPI |
| 3 | **Բոլորը մեկում տպիչ (All in one printer)** | **Printing:** up to 1200dpi, >= 38 ppm (BW),<br>**Number of Tones:** 256 Gradations,<br>**Scanner:** BW/Color, with resolution up to 600dpi,<br>**Memory:** 512MB or above,<br>**Maximum paper Size:** A3 (Scan), A4 Print<br>**Features:** Copy, Print, Xerox, Scan, Duplexing, ADF, Ethernet, Wi-Fi, USB 2.0 |

| | | |
|---|---|---|
| 4 | **Պրոյեկտոր (Projector)** | **Display:** DLP,<br>**Contrast Ratio:** 3000:1 or above,<br>**Native Resolution:** >= WXGA (1280x800),<br>**Brightness:** >= 3600 Lumens in normal mode,<br>**Light Source Life:** Min. 3000 hours, Projector should have HDMI video input Interface and 20W built-in speaker |
| 5 | **Պրոյեկտորի էկրան (Projector Screen)** | **Viewing Surface:** Matte White,<br>**Active Area:** (h x w) **50x80**<br>**Diagonal Size : >=** 94" |
| 6 | **Սենսորային էկրան (Interactive Touch board)** | **Interactive Display** 24" touchscreen Full HD (1920 x 1080) resolution with HDMI or DVI-I video input interface, 10 simultaneous touch points or above,<br>**Pen**: cordless, battery-free,<br>**Max report rate:** 120 points per second or above, pen should have mouse-click emulation functionality, three color digital ink and eraser tool |
| 7 | **Ինտերակտիվ համակարգ (Interactive Display)** | **Screen: >=** 86" 4K UHD (3840 x 2160) resolution,<br>HDMI video input Interface,<br>Built-in speakers 10W,<br>>= 50000 hours life,<br>20 simultaneous touch points, tempered glass, Blue Light Filter and a wide viewing angle<br>**Display** should have wireless content sharing technology to be compatible with iOS, Android and Microsoft Windows systems, Integrated Operating system Windows 10 or Android 8.0,<br>**CPU: >=** 3.2 GHz clock speed,<br>**RAM :** >=8GB DDR 4,<br>**SSD:** >= 256GB,<br>dedicated graphics card: >= 2GB DRAM,<br>Integrated network card with gigabit internet,<br>License included for working with word, excel, PDF file types.<br>Heavy-duty wall mounts or special mobile trolley for instalation |
| 8 | **Թվային տեսախցիկ (Digital Camera)** | **Matrix:**>= 1/2.33" Size, 12MP or above,<br>**Video Recording:>=** FHD (1920x1080) @60Hz, Night Vision, Optical Stabilization, Face Recognition,<br>**Picture Resolution:** >=6528x3672,<br>**File Format:** AVCHD, MP4, JPEG<br>**Optical Zoom: >=**20x, **Digital Zoom:** >= 1500x,<br>**Aperture: >=**f/1.8min 3.6max,<br>**Shutter speed: >=** 1/8000min**,** 1/25max<br>**Filter size:** >= 49mm<br>**Display:**>=3" Rotating display, TouchScreen |

| | | |
|---|---|---|
| | | **Minimum runtime on battery:>=** 1 hour<br>**I/O:** AV-OUT, 3.5mm audio jack-out, Mic-in, HDMI-out, USB, Wi-Fi<br>**Memory Support:** SD, SDHC, SDXC<br>**Audio:** 5.1 Channel, Integrated Speaker<br>**Tripod mount:** Lightweight tripod with adjustable-height legs and rubber feet, Compatible with most video cameras, digital cameras, still cameras, GoPro devices, smartphone adapters (not included), and scopes. |
| 9 | **Ֆոտո լուսավորման սարք (Photo Lighting Kit)** | **Lumens:** >= 2000<br>**Adjustable Stand:** >= 40 to 80 inches in height with 180 Degree Rotation support, Carrying Bag |
| 10 | **Անլար ցուցադրման փահանակ (Wireless Presenter)** | USB Reciever, Wireless Presentation<br>Remote Clicker with Red Dot Laser Pointer, Compatible with Windows 10 Pro<br>**Working Range:** up to 10 meters or above |
| 11 | **Խոսափող (Microphone)** | Proffesional microphone for Recording and Streaming on PC, compatible with Windows 10<br>USB connection<br>Adjustable Stand<br>Available Accessory for Tripod Boom Microphone Stand<br>**Frequency Range:** 20 Hz to 20 kHz<br>**Bit Depth:** 16/24-bit, Sample Rate: 96kHz<br>Support Cardioid, Bidirectional and Omnidirectional Polar Patterns |

**Հավելված 2**

Գնառաջարկի ձև

«___»_____________2020

Պատվիրատու՝ «Եվրասիա միջազգային համալսարան»
Հասցե՝ Ազատության 24/2, Ջեյթուն, Երևան, 0014

Սարքավորումների ձեռքբերման սույն մրցույթի պայմանների համաձայն, մենք առաջարկում ենք սարքավորումները տրամադրել Հավելված 2.1-ում ներկայացված մեկ միավորի արժեքով:

Մենք առաջարկում ենք ավարտել ապրանքների մատակարարումը ______________ (բառերով և թվերով) օրացուցային օրում՝ Պայմանագրի ստորագրման օրվանից սկսած:

Սույն գնառաջարկը ներկայացված է մեկ միավորի արժեքի համար: Արժեքները ենթակա են փոփոխության՝ երկրորդ փուլում հայտարարված սարքավորումների ընդհանուր քանակի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու արդյունքում:

Սույն Գնառաջարկը (այդ թվում՝ Հավելված 2.1 և Հավելված 2.2-ի պարամետրեր) հանդիսանում է առաջին փուլի մասնակցության հայտ: Ընտրվելու դեպքում հայտնում ենք պատրաստակամություն՝ ներկայացնելու նոր գնառաջարկ՝ վերանայելով ընդհանուր գինը ըստ հստակեցված քանակությունների: Մենք գիտակցում ենք, որ Դուք պարտավորված չեք ընդունել նվազագույն արժեքով Գնառաջարկը կամ ցանկացած այլ Ձեր կողմից ստացված Գնառաջարկ:

Լիազորված անձի ստորագրությունը ______________________________________________ [կնիք]
Ստորագրողի անունը և պաշտոնը ______________________________________________
Կազմակերպության անվանումը ______________________________________________
Հասցեն ______________________________________________
Հեռախոսահամարները ______________________________________________

Co-funded by the Erasmus+ Programme of the European Union
ARMDOCT

Հավելված 2.1.

Առաջարկվող ապրանքների նախնական գները (առաջին փուլ)

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| N | Անվանումը | Մեկ միավորի գինը (ներառյալ վերջնական նշանավայր տեղափոխման ընդհանուր գինը յուրաքանչյուր ապրանքի համար) | Մատակարարման ժամկետ |
| 1 | Նոութբուք (Laptop) | | |
| 2 | Գրասենյակային համակարգիչ (Desktop PC) | | |
| 3 | Բոլորը մեկում տպիչ (All in one printer) | | |
| 4 | Պրոյեկտոր (Projector) | | |
| 5 | Պրոյեկտորի էկրան (Projector Screen) | | |
| 6 | Սենսորային էկրան (Interactive Touch board) | | |
| 7 | Ինտերակտիվ համակարգ (Interactive Display) | | |
| 8 | Թվային տեսախցիկ (Digital Camera) | | |
| 9 | Ֆոտո լուսավորման սարք (Photo Lighting Kit) | | |
| 10 | Անլար ցուցադրման վահանակ (Wireless Presenter) | | |
| 11 | Խոսափող (Microphone) | | |
| 12 | Երաշխիքի ժամկետ (քանի տարի) | | |
| Ընդամենը | | | |

**Հավելված 2.2**

Առաջարկվող ապրանքների հատկորոշիչները

| N | Անուն | Տեխնիկական պարամետրեր |
|---|---|---|
| 1 | Նոութբուք (Laptop) | |
| 2 | Գրասենյակային համակարգիչ (Desktop PC) | |
| 3 | Բոլորը մեկում տպիչ (All in one Printer) | |
| 4 | Պրոյեկտոր (Projector) | |
| 5 | Պրոյեկտորի էկրան (Projector Screen) | |
| 6 | Սենսորային էկրան (Interactive Touch board) | |
| 7 | Ինտերակտիվ համակարգ (Interactive Display) | |
| 8 | Թվային տեսախցիկ (Digital Camera) | |
| 9 | Ֆոտո լուսավորման սարք (Photo Lighting Kit) | |
| 10 | Անլար ցուցադրման վահանակ (Wireless Presenter) | |
| 11 | Խոսափող (Microphone) | |